***Կարգապահական գործ թիվ ԿԳ-21001***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի սեպտեմբերի 14-ի թիվ 287-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**ԹԻՎ ԿԳ/169-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆԺԵԼՅԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀՈԲՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ),** նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Արսեն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հարություն Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Կարեն Մեժլումյանի, Ռուբեն Հակոբյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրչյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Անժելյա Վոլոդյայի Հոբոսյանին (արտոնագիր՝ 52) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

***Պ Ա Ր Զ Ե Ց՝***

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

ՀՊԳ ղեկավար Մելանյա Առուստամյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ 05.11.2020թ. ՀՀ ՓՊ հանրային պաշտպանի գրասենյակում մուտք է արվել ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի կալանավոր Արսեն Վաչագանի Խաչատրյանի **(այսուհետ՝ նաև Ամբաստանյալ)** 28.10.2020թ. դիմումը **(այսուհետ՝ Ամբաստանյալի դիմում),** որով վերջինս բողոք է ներկայացրել հանրային պաշտպան Անժելյա Հոբոսյանի **(այսուհետ՝ նաև Փաստաբան կամ հանրային պաշտպան)** դեմ: Ամբաստանյալը հայտնել է, որ Փաստաբանը չի կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ չի այցելել կալանավայր, պատճառաբանելով, որ գտնվում է ռիսկային տարիքում, ինչպես նաև դատարանին պատշաճ չի ներկայացրել Ամբաստանյալի առողջական խնդիրների ապացուցողական փաստաթղթերը:

Դիմողը հայտնել է, որ 25.09.2019թ թիվ Վ/3749/19/-Ա որոշմամբ Արսեն Վաչագանի Խաչատրյանի վերաբերյալ քրեական գործը հանձնվել է հանարային պաշտպանին, ով Ամբաստանյալի Դիմումի վերաբերյալ 16.11.2020թ. ներկայացրած զեկուցագրով, **(այսուհետ՝ նաև զեկուցագիր)** հայտնել է հետևյալը. *«Ես իրոք «Արմավիր» ՔԿՀ չեմ գնացել, չեմ տեսակցել Արսեն Խաչատրյանին, քանզի ես ունեմ*

*բազում հիվանդություններ, բացի այդ, կորոնավիրուսի պայմաններում անհանգստացել եմ, որ հնարավոր է վարակվեմ, քանի որ ինքս գտնվում եմ խոցելի խմբում: Բացի այդ որևէ անհրաժեշտություն չեմ տեսել քր. գործի վերաբերյալ հանդիպել Արսեն Խաչատրյանին, որովհետև բոլոր միջնորդությունները պետք է կատարվեին զուտ դատական նիստի ընթացքում»:*

Փաստաբանը զեկուցագրով նշել է, որ ծանոթացել է քրեական գործի նյութերին, մասնակցել դատական նիստերին, հարցումներ կատարել, մասնակցել խափանման միջոցի քննարկման հարցին, բողոքարկել որոշումը վերաքննիչ դատարան և այլն:

Դիմողը խնդրել է կարգապահական վարույթ հարուցել Անժելյա Հոբոսյանի նկատմամբ:

**2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 08.01.2021թ. թիվ 1-Ա/ԿԳ-21001 որոշման հիման վրա փաստաբան Անժելյա Հոբոսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք) 2.6.1 և 3.5.5** ենթակետերի խախտման հատկանիշներով:

15.01.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող Հունան Բաբայանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

**3. <u>Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>**

**<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>**

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն, որով պնդել է Դիմումով իր հայտնածը:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը, թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

**<u>3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունը.</u>**

Փաստաբան Անժելյա Հոբոսյանի կողմից ներկայացված բացատրությունը Պալատում մուտքագրվել է 16.12.2020 թվականին:

Բացատրությամբ փաստաբանը հայտնել է, որ ինքը պատշաճ կերպով իրականացրել է դատապարտյալ Արսեն Խաչատրյանի շահերի պաշտպանությունը, ծանոթացել է քրեական գործի նյութերին, մասնակցել է տեղի ունեցած դատական նիստերին, բազմիցս հարցումներ է կատարել Ամբաստանյալի առողջական վիճակի վերաբերյալ, որոնց պատասխանները ներկայացրել է Ամբաստանյալի խափանման միջոցի քննարկման ժամանակ, ներկայացրել է վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ:

Փաստաբանը նաև նշել է, որ համավարակով պայմանավորված չի այցելել Ամբաստանյալին, քանի դեռ վերջինս չէր դիմել այդ պահանջով ՀՊԳ-ին, իսկ Ամբաստանյալի կողմից համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո ինքը երկու

անգամ այցելել է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ, սակայն առանձնատեսակցությունները չեն կայացել, քանի որ առաջին անգամ քրեակատարողական հիմնարկում հոսանք չի եղել, իսկ երկրորդ անգամ Դատապարտյալը չի ցանկացել հանդիպել փաստաբանին:

Պալատի խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացել է և ըստ էության հաստատել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

**<u>3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:</u>**

**4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>**

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 15.03.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 18.03.2021թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 14.09.2021թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

**5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

**1.** 25.09.2019 թվականին ՀՊԳ ղեկավարի թիվ Վ/3749/19/-Ա որոշմամբ՝ Արսեն Վաչագանի Խաչատրյանի գործը հանձնվել է հանրային պաշտպան Անժելա Հոբոսյանին: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի կողմից ՀՀ ՔՊ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալին ներկայացրած զեկուցագրով և Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

**2.** Հանրային պաշտպան Անժելա Հոբոսյանը սկսած 25.09.2019 թվականից մինչև 05.11.2020թ. չի այցելել «Արմավիր» ՔԿՀ և չի տեսակցել Արսեն Խաչատրյանին*: Սույն փաստը հաստատվում է դիմումով և Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

**3.** Հանրային պաշտպան Անժելա Հոբոսյանը Դիմողին չայցելելու հանգամանքը (վարքգիծը) հիմնավորել է Աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19): *Սույն*

*փաստը հաստատվում է Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

**4.** Անժելյա Հոբոսյանը հարցումներ է կատարել «Արմավիր» ՔԿՀ պետին և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ ղեկավարին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից Դիմումին կից ներկայացված փաստաթղթերից:*

**5.** Անժելյա Հոբոսյանը ծանոթացել է գործի նյութերին, մասնակցել դատական նիստերին, մասնակցել խափանման միջոցի քննարկման հարցին, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ կազմել է վերաքննիչ բողոք և վերաքննիչ Դատարանի որոշման դեմ կազմել է վճռաբեկ բողոք: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերով, ինչպես նաև սույն փաստը հաստատված է համարվում, քանի որ կողմերը չեն վիճարկել:*

**6.** Աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման պատճառով՝ համապատասխան կանխարգելման միջոցների ու միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 2020 թվականի մարտ ամսից հանրային պաշտպանի գրասենյակն աշխատել է հեռավար կարգով: *Սույն փաստը հաստատված է համարվում, քանի որ կողմերը չեն վիճարկել:*

**7.** Դիմողն հաշմանդամություն ունեցող անձ է, որը ունի տեղաշարժվելու հետ կապված խնդիրներ և անգամ չի կարողացել մասնակցել իրեն վերաբերող դատական նիստերին: *Սույն փաստը հաստատված է համարվում, քանի որ այն չի վիճարկվել:*

**8.** Ա. Հոբոսյանը չի տեսակցել և Դիմողին և չի ունեցել նույնիսկ որևէ հաղորդակցություն: *Սույն փաստը հաստատվում է կարգապահական գործի քննության ընթացքում Խորհրդին Ա. Հոբոսյանի հայտարարությամբ:*

**9.** Հանրային պաշտպան Անժելյա Հոբոսյանը այցելել է Արսեն Խաչատրյանին նվերջինիս կողմից 28.10.2020 թվականին Պալատ ներկայացված դիմումից հետո: Արսեն Խաչատրյանը հրաժարվել է տեսակցությունից: *Սույն փաստը հաստատվում է դիմումով և Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

**6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Անժելյա Հոբոսյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 10.11.1997 թվականին: 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է երկու կարգապահական վարույթ, չհաշված սույն կարգապահական գործի: Վերջինիս նկատմամբ հարուցված երկու կարգապահական վարույթն էլ գտնվում է գործ նախապատրաստող անձանց մոտ:

**7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

***Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Անժելյա Հոբոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ:***

Սույն դեպքում Խարհրդի համար պարզման է ենթակա հետևյալ իրավական հարցադրումը՝ արդյո՞ք փաստաբան Ա. Հոբոսյանը վստահորդին բարեխղճորեն և ժամանակին է ցուցաբերել իրավաբանական օգնություն, մասնավորապես այցելել է արդյո՞ք ՔԿ հիմնարկ՝ վստահորդին տեսակցելու:

***Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝***

*պահպանելով Օրենքի, կանոնադրության և Կանոնագրքի նկատմամբ պահանջները՝ փաստաբանը պարտավոր է միշտ պաշտպանել իր վստահորդի շահերը և գերադասել դրանք իր անձնական և փաստաբան գործընկերների շահերից*:

**Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝** *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

*ա. նյութերի ուսումնասիրությունը,*

*բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,*

*գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,*

*դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:*

Վերլուծելով նշված կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Համադրելով Կանոնագրքի նշված ենթակետերը՝ Պալատի Խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ փաստաբանը պարտավոր է ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին, պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Իրավաբանական օգնության տրամադրման շրջանակներում առանցքային նշանակություն ունի վստահորդի հետ հաղորդակցությունը, որը որպես կանոն իրականացվում է տեսակցությունների միջոցով: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխղճության ապացույց: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ

իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ 25.09.2019 թվականին ՀՊԳ ղեկավարի թիվ Վ/3749/19/-Ա որոշմամբ՝ Արսեն Վաչագանի Խաչատրյանի գործը հանձնվել է հանրային պաշտպան Անժելյա Հոբոսյանին:

Հանրային պաշտպան Անժելյա Հոբոսյանը սկսած 25.09.2019 թվականից մինչև 05.11.2020 թվականը չի այցելել «Արմավիր» ՔԿՀ և չի տեսակցել Արսեն Խաչատրյանին:

Ավելին, Կարգապահական գործի քննության ընթացքում Խորհրդին Ա. Հոբոսյանը հայտնել է նաև, որ Դիմողի հետ առհասարակ չի ունեցել որևէ հաղորդակցություն:

Ամբողջ վերը նշվածը հիմք ընդունելով, միանշանակ է, որ, փաստաբանը՝ ստանձնելով Արսեն Վաչագանի Խաչատրյանի պաշտպանությունը, փոխադարձ հախորդակցության բացակայության պայմաններում վերջինիս շահերը ոչ պատշաճ կերպով է ներկայացրել, այն է՝ մշտական կամ պարբերական կապ չի պահպանել, որևէ տեղեկատվության փոխանակում չի եղել, գործի ընթացքի վերաբերյալ որևէ տեղեկություն չի տրամադրել, ինչպես նաև գործի հնարավոր արդյունքի մասին չի տեղեկացրել Դիմողին: Փաստորեն, Դիմողը շուրջ մեկ տարի բավարար չափով տեղեկացված չի եղել իր գործի ընթացքի մասին պաշտպանի կողմից իրականացվող կամ մշակված հետագա մարտավարության մասին, այդ գործընթացները չեն համաձայնեցվել Դիմողի հետ: Հատկանշական է, որ Դիմողն ունի տեղաշարժվելու հետ կապված խնդիրներ, ավելին վերջինս չի կարողացել մասնակցել նաև իրեն վերաբերող դատական նիստերին և այս պայմաններում պաշտպանը պետք է առավել ջանասիրություն ցուցաբերեր վերջինիս շահերի պաշտպանության ուղղությամբ:

Ինչ վերաբերում է Փաստաբանի այն պնդմանը, որ չի այցելել Դիմողին, քանի որ Աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում առկա է նոր կորոնավիրուսային համավարակ (COVID-19) ինչի արդյունքում հանրային պաշտպանի գրասենյակը 2020 թվականի մարտ ամսից աշխատել է հեռավար կարգով, ապա, նախ հարկ է նշել, որ վերջինս առնվազն 2019 թվականից սեպտեմբերի 25-ից մինչև 2020 թվականի մարտ ամիսը (շուրջ վեց ամիս) կարող էր այցելել Դիմողին, քանի որ այդ ընթացքում բացակայում էր համավարակով պայմանավորված որևէ սահմանափակում: Դրա հետ մեկ տեղ պետք է նշել, որ հանրային պաշտպան Անժելյա Հոբոսյանի համավարակով պայմանավորված ռիսկային գոտում գտվելը չի կարող հանգեցնել իրավաբանական օգնություն չտրամադրելուն: Տվյալ իրավիճակում վերջինս զրկված չի եղել ձեռնարկյել համապատասխան միջոցներ փոխարինվելու այլ հանրային պաշտպանուվ գերադասելով շարունակել իր ոչ ամբողջական պաշտպանությունը: Փաստաբանը պարտավոր է միշտ պաշտպանել իր վստահորդի շահերը և գերադասել դրանք իր անձնական շահերից, իսկ դրա անհնարինության դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի չխաթարվի վստահորդի պաշտպանությունը:

Հարկ է նաև նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս նույնպես կորոնավիրուսային համավարակով պայմանավորված հայտարարված է կարանտինի իրավական ռեժիմը, որի պայմաններում սակայն Անժելյա Հոբոսյանը երկու անգամ այցելել է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ տեսակցելու Արսեն Խաչատրյանին, ով չի իջել առանձնատեսակցության՝ չցանկանալով տեսնել Ա.Հոբոսյանին: Ընդ որում հիշյալ տեսակցությունների նպատակով ՔԿ հիմնարկ Ա. Հոբոսյանի կողմից այցելությունները տեղի են ունեցել Արսեն Խաչատրյանի 28.10.2020 թվականի դիմումից հետո:

Անդրադառնալով Փաստաբանի այն պնդմանը, որ հարցումներ է կատարել «Արմավիր» ՔԿՀ պետին և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ ղեկավարին, ծանոթացել է գործի նյութերին, մասնակցել դատական նիստերին, մասնակցել խափանման միջոցի քննարկման հարցին, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ կազմել է վերաքննիչ բողոք և վերաքննիչ Դատարանի որոշման դեմ կազմել է վճռաբեկ բողոք՝ Խորհուրդն արձանագրում է, որ չնայած նրան, որ փաստաբանի կողմից կատարվել են վերը նշված գործողությունները, այնուամենայնիվ այդ ամենը չի կարող լինել բավարար և լիարժեք՝ առանց իր պաշպանյալին տեսակցելու, հետևաբար փաստաբանը անհրաժեշտ և բավարար միջոցներ չի գործադրել Դիմողի իրավունքների պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու ուղղությամբ:

Վերոգրյալը հաշվի առնելով, արձանագրվում է, որ Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 2.6.1, և 3.5.5 ենթակետերի խախտում:

***Կարգապահական տույժի ընտրությունը***

**Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

**Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

*1) նկատողություն.*
*2) խիստ նկատողություն.*
*3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների*
*4) տուգանք*
*5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը

հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Անժելյա Հոբոսյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերի պահանջներով, Խորհուրդը՝

Խորհուրդը

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

***1. Փաստաբան Անժելյա Վոլոդյայի Հոբոսյանին (արտոնագիր թիվ 52) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և Կանոնագրքի 2.6.1 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար:***

***2. Փաստաբան Անժելյա Վոլոդյայի Հոբոսյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ նկատողություն:***

***3. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Անժելյա Վոլոդյայի Հոբոսյանին:***

*<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Արսեն Հարությունյան

**14 սեպտեմբերի 2021թ.**
**թիվ ԿԳ/169-Ա**
**ք. Երևան**